

Հրատարակութիւն Նիկո ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻՆ, Ընկերութեան № 31


Պ. Խողեզեր

# ԵՐԲ ԵՍ ԴԵՌ ՀՈՎԻԻ ԵՒ

Պատմւածքներ

Թարգմ. Աթ. Խնկոյեան

Յաւելւած ՀԱՅԿԵՐ ամսագրի



ՏՊ. ԱՐԱՆԵԱՆ 1917

30 MAY 2011

Հրատարակութիւն Նիկո ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻՆ Ընկերու-  
թեան № 31

891.718.4  
Շ-62 46

Պ. Թողեգեր

## ԵՐԲ ԵՍ ԴԵՌ ՀՈՎԿԻՒ ԵՒ

Պատմւածքներ

Թարգմ. Աթ. Խնկոյեան

100/  
30990

Յաւելւած ՀԱՍԿԵՐ ամսագրի



Տպ. ԱՂԱՆԵՑ 1917

Թէ ԻՆՉՊԵՍ ԳԱԱՑԻ ԵՍ ՄԻ ՊԱՌԱՒԻ ՄՈՏ

Շաբաթ օքերը, երբ հայրս սկսում էր ածիլ-  
ել, ոս միշտ մտնում էի սեղանի տակ՝ հօրս  
վրա նայելը այնքան էլ ապահով չէր:

Երբ հոյլս ածիլում էր, այտերն ու շրթունք-  
ները ծածկում էին սապոնի թանձր փրփուրով  
և շտա նման էր լինում մի տղայի, որ ծածուկ  
խպշտել է կաթնամանի երեսի փրփուրը: Իսկ  
երբ ապակու նման պսպղացող ածելին կաշւէ գո-  
տու վրա սրելուց յետոյ, սկսում էր դանդաղ տա-  
նել ու բերել իր այտերով, այնպէս սոսկալի  
ծոմռում էր բերանը, այտերն ու քիթը և առ-  
հասարակ ամբողջ երեսը, որ նրա դսւրեկան,  
բարի դէմքը անկարելի էր լինում ճանաշել:  
Նա խորը ներս էր քաշում շրթունքները և  
զարմանալի նման էր լինում մեր հարեսան ծե-  
րունի Ֆէյտին, որի բերանում ատամ չը կար-  
կած թէ իր բերանը մէկ աջ, մէկ ձախ էր  
ծռում, կարծես ածխարարի կին Սօնիկը լի-  
նէր, երբ ոս հայհոյում էր ըր հաւերին, կամ  
աշքերը ողջացնում էր և այտը այնպէ

ուռեցնում, որ յիշեցնում էր հարհան դերձակին, որը շարունակ կնճռուառում էր, հենց որ մէկե սկսում էր հետք խօսել:

Հօրո թբաշւելու ժամանակ ես մտաբերում էի մեր հարևանների գէմքերը և չէի կարողուում ծիծաղս զսպել:

— Հերիք է յիմարութիւն անես, կիսլանջ, — քաղցրութեամբ ասում էր հայրս:

Բայց հենց որ արտասանում էր այդ խօսքերը, նրա գէմքը դարձեալ այսպէս ծիծաղելի էր դառնում, որ ես նորից հոհուում էի: Նրա առաջ դրւած էր լինում հայելին, և ես կարծում էի թէ ինքն էլ անշաւշտ կը ծիծաղի: Բայց դրա փոխարէն լսում էր նրա խոխոսցը: — «Եթէ դու չը զսպես քեզ, այ չար, սապօնի վրձինը գլխիդ կը գայ»:

Ես մտնում էի սեղանի տակ և գեռ երկար ցնցում էի ծիծաղիցու: Այն ժամանակ հայրս հանգիստ երեսը վէր էր անում:

Մի անգամ հայրս այդպէս նստել էր ու թբաշւում էր, իսկ ես էլ սովորութեանս պէս թաք էի կացել սեղանի տակ, մէկ էլ յանկարծ բակում լսեց ոտների ձայն: մէկը կօշի՛ների ձիւնը թափ էր տալիս: Դուռը բացւեց և սենեակ մտաւ մի բարձրահասակ տղամարդ: Նշա երկար ու խիտ, շէկ բեխերից սառցէ այնպիսէ լուլաներ էին կախւել, ինչպէս մեր կտուրի եղըր-

ներից: Նա իսկոյն նստեց նստարանին, գրպանից հանեց չիրուխը, բերանը տարաւ և կրակ անելով, ասաւ: «Ածիւթւում եմ, պատասխանեց հայրս, շարունակելով ածելին աջ ու ձախ տանել բերել, ծռմուելով գէմքը»:

— Լաւ, լաւ, — երկարացրեց հիւրը:

Թիչ անց՝ անծանօթը վառեց չիրուխը, և կապոյտ ծուխի քուլաները սողացին սենեակի մէջ: Նրա բեխերից կախ ընկած լուլաները վաղուց հալւել էին և ջուրը վագել գնացել էր արգէն: Վերջապէս նա ասաւ: —

«Զըգիտեմ, տանտէր, դու ինձ յիշնում ես թէ ոչ: Հինգ տարի առաջ ես այս կողմերն եկել էի, ձեր դռան մօտիցն էլ անցկացայ, մինչև անգամ ջրհորից էլ ջուր խմեցի: Ես հիմա եկայ Շտանցից: այնտեղ կօշկակարի պառաւ այրի կնօջ մօտ մշակ եմ: Նա ինձ ուղարկել է քո մեծ որդու ետեկից:»

Այս խօսքերը լսելիս քրախնքը ուղղակի վրաս տուաւ: Զէ որ այդ մեծ տղան ես էի: Ես մտայ ամենամութ անկիւնը:

— Իմ մեծ որդու ետեկիցն ես եկել, — պատասխանեց հայրս: — մինք նրան քեզ սիրով կը զիշենք: Ինչերնիս է պէտք այդ տեսակ անպիտանը:

Գիւղացիները դիտմամբ այդպէս են ասում,

երբ ուզում են չարացնել և վախեցնել իրենց եռես առաջ տղաներին։ Բայց հիւրը կանգնեցրեց նրան։ «Ոչ, տանտէր, ես կատակ չեմ անում։ Կոշկարքի կինը, պառաւ այրին, ուզում է կտակ որել տայ, էտպէս մի բան, բայց զրոյ ջրկայ։ Լսել է, որ դու մի գրագէտ որդի ունես և ինձ ուզարկել է, որ խնդրեմ քեզանից, մի օրով նրան տանեմ։ Ապահով կարսղ ես լինել, որդուդ երկար չի պահի և անշուշտ մի բան էլ կընծայի։»

Հսկավ այդ եռ սիրտ առայ և մինչև անգամ կօշիկներիս կրունկներով խփեցի սեղանի ոտին, հիւրի առաջարկութիւնը ինձ գուը եկաւ։

— Դատարկ բան է, — աղազակեց հայրս, որն արդէն մի թուշը վերէր արել։ — Մի մատ անպատճիս ինչ բանն է էտպէս հեռու սարերն ընկնի է ովատ եղանակին։ Չե՞ որ տեղ համնելու համար չորս ժամփա պէտք է կտրել։

— Ճիշտ է, — առաւ բանւորը, — հենց այդ պատճառով էլ ես եկայ նրա ետևից։ Կառնեմ նրան շալակո, ոտները ուսերիցո կը կախի և ես նրան վրաս կը պահեմ. այդպիսսվ մենք տեղ կը հասնենք։

— Հիմա կանգնել նկարագրում ես, առանց քեզ էլ գիտեմ թէ ինչպէս են տանում շալակով։

— Ուրեմն այդպէս, նշանակում է համաձայն ես։ Կիրակի երեկոյեան տղային ետ կը բերեմ։

— Բան զիտես էն ասա, իհարկէ ողջ-առողջ տը-

դայիս ինձ կը հասցնես, — ասաւ հայրս։ — Եթէ միայն պառաւը կտակ ունի անելու և տղաս էլ կը համաձայնուի գալու, ես արդեկը չեմ լինի և չեմ խանգարի։

Երբ նա արտասանեց վերջին խօսքերը, արդէն երեսը բոլորովին կոկ ածիկել էր։

Մի քիչ յետոյ ես արդէն տօնական շորերս հագելէի և զգալով իմ սեփական արժանաւորութիւնը՝ ցնծալով ետ ու առաջ ման էի գալիս սենեակում։

— Այ, գու թափառական, — կանգնեցրեց հայրս ինձ, — չե՞ս կարող հանգիստ նստել։

Ես իսկապէս չէի կարող մի տեղ նստել. իսկոյն ելոյ բանւորի շալակը և ուզում էի ճամփա ընկնէի։ Այդ ժամանակ ներս մտաւ մայրս և կաթնապուր բերեց։ «Կերէք, էս էլ ձեր ճամփաբաժինը», — ասաւ նա։ Նրա հիւրասիրութիւնը շատ տեղի էր։ Ես գեռ չէի տեսել, որ մէկն այդպիսի առահութեամբ ուտի, ինչպէս ուտում էր այն բանւորը։ Ես այդ ժամանակ ետ ու առաջ էի անում սենեակում և մտածում էի թէ ինչպէս պիտի գրեմ պառաւի կաակը։

Երբ ընթրիքը վերջացաւ և պուտուկը այնպէս դատարկւեց, որ մի հատիկ էլ չէր մնացել մէջը ես բարձրացայ բանւորի ուսերը, բոնեցի նրա, միքուքից և ազօթք ասելով ճամփա ընկայ։

Արեն արդէն մայր մտնելու վրա էր, կապատգոյն ստւերները ընկել էին հոգիտների գրա։

հեռաւոր սարերի ձիւնապատ կատարները փայտում էին կարմրագոյն շողշողանքից:

Իմ ձին սարը բարձրանալիս չէր վախում թէ ձեան մէջ կը խրւի. բայց երբ անտառի բերանը հասանք, որտեղ բուսած էին մացառներ, ջահե փեր և մայրի ծառեր, և մտանք խիտանտառը, գնալն արդէն աւելի զժւարացաւ: Երեաց որ ձիւնն այդտեղ աւելի խորն է, փափուկ և փըսրուն: Բայց բանւորն այդ բանը նախատեսել էր: Երբ մենք հասանք մի հին փշակաւոր փշատերն ծառի, որը դեռ էլի յամառութեամբ փեր էր ցցել անճոռնի ճիւղերը, նա կանգնեց, ձեռքը տարաւ փշակը և այնտեղից հանեց մի զուգուսենու ոստից գործած երկար տրեխ, և կապեց կօշիկների տակը: Յետոյ մենք շարժւեցինք առաջ, բայց առաջ գնալը դժւարացաւ, հիմա նա ոտները շատ լայն լայն պէտք է դնէր, բայց իր տրեխների շնորհիւ ձիւնի մէջ չէր խրւում:

Շուտով մթնեց և երկնքում վառւեցին աստղերը: Յանկարծ ես զգացի, որ իմ ձին ետ է անում իմ կօշիկները, յետոյ էլ ոտներիցս հանեց և զրեց գոգնոցի մէջ:

— Հի բա տիրացու, ասաւ նա ինձ, — դիր ոտներդ իմ կողքի գրպանները. կարող են սառչել:

Զեռքերս սկսեց տաքացնել իր շնչովը, մի ան, որ ծառայեց ձեռնոցների տեղ: Ճուրտը կմշտում էր իմ թշերը, ձիւնը ճրճը-

սում էր ոտների տակ, իսկ մենք գնում էինք ու գնում անտառներով, սարերով: Այդպէս անցանք մենք բարձր սարերի շարքը, որտեղ ես իսկի ամառն էլ չէի եղել: Երբեմն նկատելով որ սենք դանդաղ ենք գնում, ես թեթևակի ծնկներս աեղմում էի իմ ձիու կողքերին և նա համբերութեամբ տանում էր այդ և կարծես թէ արագացնում էր քայլերը: Նա շատ լաւ գիտէր ճամփան:

Վերջապէս մենք ծուեցինք մի կողմի վրա և սկսեցինք իջնել սարիցը մի նեղ շաւզով: Մի տեղ հեռւից փալփլում էր կրակը: Եւ ահա, երբ ես դիտում էի շուրջս ծառերը, անծանօթ տեղերը, բանւորը կանգ առաւ մի ինչ որ բնակարանի առաջ, որտեղից մի փոքր լոյս էր երկում և ասաւ:

— Փոքրիկ պարոն, դուք իմ խօսքին հաւատացիք, շատ կարելի է ես քո հօր դէմ թշնամութիւն ունէի և քեզ խարելով քերի այս աւագականոցը:

Ես ականջներս կախած լսեցի նրան, մտածեցի, մտածեցի և կատակի ձեռվ ասացի. «Հայրս ինձ հաւատաց պառաւ կնոջ բանւորին, հաւատաց նրա խօսքին և չեմ կարծում, որ նա ինձ բերի աւագականոցը»:

Բանւորը միայն հռնուաց: Մի քիչ յետոյ նա ինձ իջեցրեց մի կոճղի վրա և ասաւ. «Ահա մենք արդէն տանն ենք»: Նա բաց արաւ դուռը և ներս մտաւ:

Փոքրիկ սենեակի օջախում շիկացած ածու-

Եթ կոյտը կարմիր բոց էր արձակում. տնկւած վառում էր մարխը: Յատակին փոած էր յարդե ներքնակը, որի վրա քնած էր մի մանուկ: Մանկան մօտ կանգնած էր մի կին, պառաւ և կուզը դուքս ընկած: Նրա դէմքը կնճռու էր և այնպէս պորշագոյն, ինչպէս հազի շորերը:

Երբ մենք ներս մտանք, ալգ կինը մի քանի անգամ ճշաց, յետոյ բարձր ձայնով հոհուց և թաք կացաւ վառարանի ետեր:

—Սա է իմ տանտիկինը,—ասաւ ինձ իմ ուղցոյցը, —իսկոյն քեզ նետ կը խօսի. առ այժմ նոտիր նստարանին, այ այնտեղ, անկոզնու մօտ և հազիր կօշիկներդ:

Ես լսեցի նրան, իսկ ինքը նստեց ինձ մօտ մի փայտի կտորի վրա: Երբ որ կինը վերջացրեց ծիծալը, մօտեցաւ օջախին, մի շիչ նրա շուրջը գէս ու գէն ընկաւ և շուտով մի կաւէ աման ալրով սուպ բերեց գրեց սեղանին և երկու գդալ էլ նետը: Ռւղեկիցս առօք փառօք առանց շտափելու ձեռք առաւ ուտելը, բայց կերակուրը իմ ձաշակովս չէր: Վերջապէս բանւորը վերկացաւ, շշնջաց ականջիս, «հանգիստ քնիր, տղաս», և գնաց:

Երբ մնացի խեղդով սենեեակում մենակ, պառափ և քնած երեխայի հետ միասին, ինձ վատ զզացի: Եւ ահա ինձ մօտեցաւ պառաւը, և ձեռքը քըսելով իմ թշին՝ առաւ.

—Ճնորհակալ եմ Տիրոջից: Որ քեզ այսահեղ

ուղարկեց: Դեռ մի տարի չըկայ, ինչ որ աղջիկս մհուել է: Այս փոքրիկը, — նա ցոյց տւաւ քնած մանկանը, — այս փոքրիկը իմ թոռնիկն է և իմ ժառանգը: Լսում եմ թէ ինչպէս մահն արդէն իմ դուռը ծեծում է. ես արդէն պառաւ եմ, շուտով ութսունս կըլրանայ:

—Ողջ կեանքս հաւաքել եմ հաւաքել, իսկ գագաղիս համար կուզեմ բարի մարդկանցից: Ամուսինս վաղուց մեռել է և թօղել է ինձ այս տնակը: Ես շատ եմ հիւանդացել և բոլոր փողերը, որ այս տան զբաւականով էին տւել, միսել եմ ուռղամնալուս համար: Հիմա ափսոսուս եմ, որ այցպէս բանի համար եմ վշացրել փողերը: Ինչ որ ունիմ, ուղում եմ թողնել թոռնիկիս: Վճռել եմ կտակս կազմել: Զեմ ուղում խընդընեմ այդ մասին գիւղի ուսուցչին, իսկ բժիշկը առանց դրոշմանշանի չի գրի: Թո մասին լսեք եմ, որ այսպիսի ուսումնական ես, որ կարող ես առանց դրոշմանշանի էլ գրել կտակը: Այս գրաց համար էլ ուղարկեցի քո ետևից, թէ ի շատ հեռու: Վաղը դու կը գրես այն, ինչ որ ես քեզ կասեմ, իսկ հիմա պառկի և քնի:

Վերցնելով վառած մարխը, նա ինձ առաջնորդեց հարեան փոքրիկ սենեակը: Աստւած սենեակ համարէր, տախտակներով կացրած մի բան: Այստեղ ինձ համար խոտէ անկողին էր պատրաստւած, իսկ վերմակի տեղ փռած էր

պառաւի տօնական տաք շրջազգեստը:

Անկիւնում դրած էր մի արկղ երկու աշտարակ-ներով, որտեղից զանդակի ձայներ էին լսում ամեն անդամ, երբ մենք ոտք էինք դնում յատակի տախտակներին: Պառաւը մի տաշեղ դրեց աշտարակների լուսամուտներից մէկում, ինձ խաչակնքեց և մի քանի ըոպէից յետոյ ես մենակ մնացի սենեակում:

Ցուրտ էր. դողս բռնել էր, ոչ թէ միայն ցրտից, այլև տանտիկնոջ երկիւղից: Բունս մտնելուց առաջ, հետաքրքրութիւնը ստիպեց ինձ արկղի գնակը բանալ: Հենց բանալուս պէս դուրս թըռու մուկը, որ կրծում էր ինչ որ ոսկեզօծ թուղթ և ինչ որ արձանի մոմէ ձեռքը: Արկղում կային շատ սրբերի և հրեշտակների արձաններ, գոյնպայն զբօշակներ և պսակներ: Ես հասկացայ, որ արկղ-մատուռը պառաւի համար եկեղեցու տեղ է ծառայում, որովհետև նա ոտքով չէր կարողանում գնալ այնքան հեռու, Շտանցի եկեղեցին պատրագին ներկայ լինելու: Ես արկղ-մատուռի առաջ կարդացի իմ բոլոր երեկոյեան աղօթքները, իննդրելով Աստծուն, որ ինձ այս զիշեր լոյս հանի: Ցետոյ հանգըրի մարխը և Աստծու անունը տալով, քնեցի խոռի վրա:

Ինձ այնպէս թւաց թէ ես երկու մարդ եմ. չովով երեակայեցի մի ուսումնական զրագիր մի օտար ցուրտ տանը, այն ինչ իոկական գիւղացու

որդին համագստանում էր իր հայրենի տաք բնում: Բունս տարել էր թէ չէր ատրել, յանկարծ հարեւոն սենեակից լսեցի ուրախ բացականչութիւններ և յետոյ բարձրաձայն ծիծաղ:

Ինչու վրա է նա ուրախանում, ինչու է այդպէս ծիծաղում: Ես սարսափեցի և մտածում էի թէ ինչպէս փախչեմ:

Պատի տախտակը տեղից հանել դժւար չէր, բայց անբախտութիւնը այն էր, որ դռանը ձիւն էր: Եօ քնեցի միայն լուսաղէմին և երազում տեսայ, էրբ թէ մի կարմիր մուկ կրծում է մատուռի բոլոր մոմէ սրբերի և հրեշտակների աջ թևերը: Աշտարակի լուսամուտից նայում է հօրս դէմքը, մի թուշը տկինման ուսցըթէ հսաղոնած, իսկ բերանում՝ վառած մարխը. Ես և զալիս էի, և ծիծաղում էի և միենոյն ժամանակ շատ սարսափում էի:

Երբ ես վերջապէս զարթնեցի, հենց իմացայ թէ արծաթէ վանդակում եմ. արնի լոյսը տախտակների ճեղքերից այնպէս պայծառ փայլում էր: Դուրս գալով անից ես զարմացած նայում էի այն նեղ կիրճի վրա, որտեղ տեղաւորւած էր տունը, և այս ձիւնապատ սարերի վրա, որոնք այնքան բարձր էին զետնից:

Սրահից լսում էր երեխայի ճչոցը և պառաւի ձայնը: Նախաճաշին երևաց շէկ բանւորը, բայց նա բամառութեամբ լուռ էր, նայում էր իր պնակին եւ ուտելը վերջացրեց, զեր կացաւ, զրեց իր

լայնեղը գլխարկը և զնաց Շատանց Եկեղեցի:

Պատաւը հանգստացրեց երեխային, տունը  
մի քիչ կարդի բերեց. յետոյ փակեց գրսի դու-  
ռը, զնաց փոքրիկ օճնեակը և սկսեց զանգահա-  
րել արկդ—մատուռի զանգակները:

Մի քիչ յետոյ նա երկու մոմ վասեց մա-  
տուռի բեմի վրա և սկսեց աղօթել: Այդ ձեր  
սրտաշարժ աղօթք կեանքումս չէի լսել:

Նա ծունկ էր չսքել մտառուի առաջ, ձեռ-  
քերը մեկնած շշնջում էր. «Թաշի վրա քաշած  
չարչարանքներիդ համար, Խաչեալ Յիսուս,  
Փրկիր իմ հանգուցեալ ծնողներին, ընդունիր  
իմ աղջկայ հոգին: Աղջիկս երկար չապրեց այս-  
աշխարհում: Այն բողէին, երբ նա իր ամուս-  
նուն արու զաւակ պարզեց, եկաւ ահարկու  
մահը և տարաւ նրան գերեզմանս:

«Թաշեալ Քրիստոս, աղաչում եմ քեզ բոլոր  
սրտավ, ողպրմիր իմ ամուսնուն, և իմ բոլոր բարի  
ծանօթներին, և բարի ցանկացողներին և անտէր  
մի թողնի անտառապահի որդուն: Խաչի վրա  
քաշած քո չարչարանքներիդ համար, Խաչեալ  
Քրիստոս, յիշիր իմ թշնամիներին, որոնք ծեծում  
էին ինձ և ոտի տակ տոլիս, և ներիր նրանց քո  
մեծ ողորմութեամբ: Անմիտները Քեզ խաչեցին  
և Դու նրանց նոյնպէս ներեցիր յանուն Քո քա-  
շած հայզարաւոր տանջանքների, հազար-հազար  
մանգամ աղերսում եմ Քեզ, Խաչեալ Յիսուս, իմ

թոռնիկին առ Քո պաշտպանութեան տակ:

«Նրա հայրը պատերազմ է զնացել, ես էլ երկար  
չեմ ապրելու.իմ թոռնիկի պաշտպանը եղիր, աղա-  
չում եմ Քեզ»:

Այսպէս էր աղօթում պատաւը: Կարմիր մո-  
մերը հանդարտ վառւում էին: Եթէ ես լինէի  
Աստծու տեղը,—մտածում էի ես այն ժմամա-  
նակ,—ես կիջնէի երկիր, կը վերցնէի մանկանը  
թերիս վրա ու կասէի. «Տեսնում ես, պա-  
ռաւ, ես վերցնում եմ փօքրիկին իմ հովանա-  
ւորութեան տակ, եւ նրա պաշտպանը կը դաս-  
նամու ես մանկանը կըտայի սպիտակ թեեր, որ նա  
թոչել կարողանար ամենաերջանիկ աշխարհը:

Բայց չէ որ այդ իմ ձեռքին չէր:

Մի քիչ անց պատաւն ասաւ.

—Հիմա գնանք գրենք:

Բայց երբ ուզեցինք գրել, աեսանք որ թուզթ,  
պրիչ ու թանաք չըկայ: Մեզանից ոչ մէկը այդ  
բանը ասածուց չէր մտածել:

Պատաւը զլուխը կախեց ու փնթվնթաց. «Այսինչ  
անբախառութիւն է»: Ես այդաեղ յիշեցի այն բժըշ-  
կին, որ թուզթ չի ունեցել և դեզի անունը դուան  
վրա է գրել: Հիմա էլ կարելի էր այդպէս անել:  
Բայց տանը կտւիճ չըճարւեց: Ես չէի իմանում ինչ  
անէի, ես ամաչում էի, որ անպատճառ էի  
եկել, հետո թուզթ, գրիչ, թանաք չէի բերել:

—Լսիր, — ասաւ ինձ պառաւը, — ածուխով գը-

բել չես կարող:

— կարող եմ, կարող...

— է, այդ էլ Աստծու օրհնութեամբ կանցնի թղթի տեղ, — շարունակեց պառաւը, — բաց առաւ վառարանի մօտե պահարանը, միջից հանեց գարակի տախտակը և տւաւ ինձ:

Ես օջախից ջոկեցի մի փափուկ ածուխ. նա պէտք է գրչի տեղ ծառայէր:

Պահարանը կանգնած էր փեղկերը բաց: Ես պառաստւեցի լսելու թէ ինչ է ասելու պառաւը, որ յետոյ գրել կարողանամ նրա խօսքերը, որ շատ շատ տարիներ յետոյ պիտի կարդայ նրա թոռնիկը. յանկարծ պառաւը ուրախ բացականչեց, նա արագ երեսն ինձանից գարձրեց, էլի մի երկու անգամ քացականչեց և ջղայնօրէն հանուց:

Ես վախիցս այնպէտ պինդ սեղմեցի ձեռքիս մէջ ածուխը, որ մանը փոշի դարձաւ: Իմ հայեացքը ակամայ ուզուեց գէպի դուռը:

Մի քիչ ծիծաղեց, յետոյ լոեց, յետոյ խորը հառաչեց, երեսի քրախնքը սրբեց, զարձաւ գէպի ինձ և ասաւ. «Դէն, գրիր: Շատ բան էլ գըրելու չես հօ. բայց էլլի, սկսիր ծայրիցը»:

Ես պատրաստւեցի:

Դրանից յետոյ պառաւը այսպէս խօսեց. «Ամբողջ աշխարհի միակ Աստւածը Դու ես, ով Աստւած, Քեզ եմ յանձնաւմ իմ հարազատ որդուն»:

Ես այդ խօսքերը գրեցի տախտակի վրա:

«Երկուսը. երկուսը, — շարունակեց նա, — մարդըն ու կինը. Երբորդը — նրանց մանուկը: Զորբորդը, հինգերորդը, ութերորդը, իններորդը, հոգսեր, հոգսեր, որոնք վերջշունեն: Աղօթիր այնպէս, ինչպէս կաղօթէ ձեռք չունեցողը: Աշխատիր այնպէս, ինչպէս կաշխատի Աստւած չը տեսնողը: Աշխատիր անդադար, Աստւած քեզ զուրկ չի թողնի»:

Երբ ես վերջին խօսքերը գրեցի, պառաւը վերցրեց տախտակը, դրեց նըան պահարանը, խնամքով փակեց և ասաւ. «Դու բարիք արիր, իմ հոգու վրայից ծանր քարը վերցրէր. Այս պահարանում թոռնիկս կը զանի իմ կտակը... Հիմասասա, քո ծառայութեան համար ինչ տամ քեզ»:

Ես բացասաբար գլուխս շարժեցի. Ես ոչինչ չէի ուզում, ոչնչից ոչինչ:

— Դու այնպէս լաւ գրում ես, դու հեռու տեղից եկար, ամբողջ գիշերը սառեցիր ցուրտ սենեակում և հիմա էլ ինձանից ոչինչ չես ուզում, զա արդարութիւն է: Ոչ, ջանիկս, այդպէս բան չի լինի:

Ես աչքս զցեցի գէպի սենեակի այն դուռը, որտեղ կանգնած էր արկղ-մատուուը: Ախ, ինչ քան լաւ կը լինէր, եթէ այդ արկղը դրւածի նէր իմ անկողնուս մօտ:

— Քեզ դուր եկաւ իմ մատուուը, — ասու նա,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Ա. ԱՅԱՍՏԻԿԱՆ Ա. Ա. 1922

— ինչպէս երեսւմ է Աստծու կամեցողութիւնն այդ է, ու ինձանից կըստանաս մատուռը: Երբ ևս մեռնեմ, միենոյն է, կը տանեն: Դու նրան կը յարդես և զուցէ քո աղօթքներում ինձ յիշես:

Նա ընծայեց ինձ մատուռիկը իր միջի բոլոր իրեղէններով: Դա ինձ համար մեծ և անոպառելի ուրախութիւն էր:

Ես ուզում էի հենց իսկոյն մատուռը դնել ու սերիս և տանել տուն, բայց պառաւը կանգնեցրեց ինձ առելով: Ենյ զու յիմար, միթէ զու մեռակ կարսղես տանել մատուռը:

Երբ բանւորը վերագարձու և մենք ճաշեցինք, նա կապեց մատուռը իմ մէջքին և յետոյ շշընջաց ինձ: «Հիմա, այ տղայ, բարձրացիր ուսերս, և պինդ նստիր»: Եւ առա ևս նորից բարձրացաց նրա ուսերը, ոսներս զրի նրա կողքի վրացնները և ձեռքերս փաթաթեցի նրա վզովը: Պառաւը մօտեցրեց քնից նոր զարթնած մանկանը և հրամայեց, որ ձեռքը մեկնի ինձ:

Շնորհակալութիւն յայտնելով ինձ, պառաւը անցաւ վառարանի ետեր և բարձր նոհաց:


Երբ մենք հասանք բարձր սարի գագաթը և Խաչառուը, բանւորը, նորից կապեց արեխները ոտների տակ, ես հարցրի թէ ինչիցն է, որ պառաւը շարունակ ճշում է և ծիծաղում: — «Նա չի ճշում և չի ծիծաղում, իմ սիրելիս, — պատասխանեց բանւորը: — Քանի տարի է նա զկրտոց ունի:

Սկզբում նա ուշագրութիւն չըդարձրեց, մինչեւ որ այդ հիւանդութիւնը առաջ բերեց ցնցումի ձայներ և ջղայնութեան ծիծաղ: Մեր վարսաւիրը ասում էր թէ նրա փորուաիքը սեղմաւմ է, կուչ է գալիս, իսկ երբ անհանգստանում է, ցնցումներ են առաջ գալիս: Նա համարեա ոչինչ չի կարողանում ուտել և նրա աչքերին միայն մահն է երեւմ»:

Ես նրան ոչ մի խօսք չասի և աչքերս չէի հեռացնում ձիւնափառ սարերի գաղաթներից և կապտագոյն անտառից: Մի պայծառ կիրակի օք էր: մենք դանդաղօրէն իջնում էինք սարից դէպի մեր տաւնը: Ես միայն մատում էի թէ ինչ պէս ինձ ընծայած մատուռը կը դնեմ ոենեակում և որ սրանից յետոյ հայրիկն ու մայրիկը էլ ուր են եկեղեցի զնում:

Բանւորը արտգ առաջ էր գնում և իմ շարուիս զնպնդում էին զանդակները: Ի՞նչ էրնը՝ շանուկում նրանց ձայնը: —

Յետոյ, մի ժամանակ անց, ես իմացայ, որ պառաւը նոյն օրը մեռել է:



## ՊԵՊԻՍ ՀԱՅՐԸ ԵՒ ԲԱՐՁՐ ԵՂԵՒՆԻՆ

Մեր տան շուրջը գտնւած դաշտերը ամեն կողմից շրջապատած էին անտառներով: Եթք ես գեռ մանուկ էի, մեր տանից քիչ հեռու անտառում բարձրանում էր մի ծեր, չորացած եղենի: Ժշա մասին աւանդութիւն կար որ շատ գարեր առաջ, երբ թուրքերի հետպատերազմ է եղել, այդ ծառի կատարին ամրացրած է եղել կիսալուսինը և նրա շուրջը քրիստոնեաների շտա արիւն է թափւել:

Ես միշտ վատ էի զգումինձ, երբ նայում էի այդ չորացած եղենուն: Նա բարձր անկւել էր անտառի գլխին, ինչպէս մի տեսիլք, և տարածել փռել իր երկար, մերկ ճիւղերը: Եղենու կատարին տեղաեղ երկում էին կանաչ ասեղներ, բայց իսկական կատարը ով գիտէր փոթորիկն էր ջարդել թէ կայծակն էր այրել: Մինչև անդամ նին մարդիկ չէին յիշում թէ այդ բանը երբ էր պատահել:

Ես սիրով նայում էի այդ եղենու վրա իմ սարահարթից, որտեղ արածում էին մեր կովերն և ոչխարները: Արևի ճաճանչներից լուսաւորւած, նա պարզ ջոկւում էր կանաչ անտառի և կապոյտ երկնքի ֆօնի վրա: Իսկ մէգու մշուշ որերը, փաթորիկի ժամանակ նաթեում էր մոայշ

և չէր ենթարկւում քամուն: Ցամքն շառաչում էր, ծռելով հարեան եղենիների կատարներն ու ճիւղերը, բայց այն եղենուն չէր կարողանում մէջ առնել, ընկճել, նա մնում էր անշարժ:

Եթէ մի անասուն փախչում էր անտառ և ես նրան որոնելու ժամանակ անցնէի եղենու մօտից, միտեսակ վախէի զգում և երկիւղով էի մտարերում այն կիսալուսինը, քրիստոնեաների թափւած արիւնը և այն բոլոր սարսափները, օրոնք պատմւում էին այդ ծառի մասին:

Ես զարմանքով էի նայում հզօր ընին: մի կողմից նա մերկացած էր և վրան երեւում էին խոր ճեղքւածքներ, իսկ միւս կողմից ծածկւած էր մաժուալատ կեղեռվ: Ներքին մասը այնպէս հաստ էր, որ երկու գիւղացի չէին կարող նրան գրկել: Անազին արմատները դուրս էին ցցւել հողից և այնպէս խլխլուած և դոսացած էին, ինչպէս և ճիւղերը:

Այդ ծառը կօչւում էր «Թուրքի եղենի», Հպարտ և յամտու մարգուն մեր կողմումասում էին: «Տեսէք, տեսէք, ինչ նազ է ծալսում, ասես թէ ծաղկի տեղնրա գլխարկին պնդացրած էինի „Թուրքի եղենին.“» Հիմա չընտայած որ ծառը վաղուց վայր է ընկել, առածը գեռ գործածւում է

Հնձի ժամանակ, երբ հայրս ու բանւորները քաղում էին հացը և խուրձեր կապում, ես

պէտք է այդ խուրձերը կրէի և տասը տասը շագէի, որ յետոյ հայրս գար և բարդեր զնէր նրանցից: Ինձ շատ գուը եկաւ այդ զբաղմունքը. ես էլ տաւարածութիւն չէի անում, մանաւանդ որ աւագ բանւորը յաճախ բղաւում էր, «Կրիր, աղայ, մի ծուլանար, ով ալարի, ոչ դալարի»:

Ես շատ արագ էի աշխատում և վազվառում խուրձերն էի կրում: Բայց հայրս կանզնեցնում էր ինձ ասելով. «Ինչ ես պոչը վառւած կատւի պէս վազվզում: Միայն հատիկներն ես հասկահան անում և խուրձերը կսիկրտում: Աշխատիր, բայց հանգիստ: Շտապելու ինչ կայ»:

Երբ այնքան մթնում էր, որ հնձւորները պէտք դադարեցնէին աշխատանքը, նրանք թաց խոտվ սրբում էին գերանզիները և ուրախ երգերով և կատակներով օգնում ինձ խուրձերը հաւաքելու. Վարձւորները վերջացնում էին իրենց աշխատանքները և գնում էին առն, որ կարդի բերեն երեկոյեան գործերը տան շուրջը, իսկ հայրիկս և ես մոռմ էինք դաշտում: Մենք դարսուտում էինք խուրձերը, բարդեր գնում:

Մանուկ ժամանակս իմ օիրելի աշխատանքը խուրձեր դարսեն էր: Ինձ հիացնում էին Ծիր կաթինը, վայր ընկնող աստղերը և լուսաւըտիկները, որոնք փոքրիկ կայծերի նման օդի մէջ շրջում էին մեր շուրջը, այնպէս որ ես վա-

խում էի չը լինի խուրձերը վառւեն: Ես լսում էի ճպուռների ճռճոցը և հետևում էի թէ ինչպէս արեի մալր մտնելուց յետոյ գետնին ցող էր նստաւմ և թացացնում խոտերն ու իմ բանկոնց: Ամեն բան հարցնում էի հօրից և նա հանգիստ և պարզ կերպով բացատրում էր ինձ բնութեան երեսյթները:

Յերեկները հայրս չէր սիրում խօսել և աշխատելիս շատ լուրջ էր, բայց երեկոները շատախոս էր գառնում, տօռւմ-ծիծաղում էր: Բանկոնս հազնելիս՝ օգնում էր ինձ, վիզո էր փաթաթում այն գոգնոցը, որ կապում էր ինքը աշխատելիս. փաթաթում էր, որ չը մքոեմ Քոկապէս ևս շատ անգամ նկատում էի, ինչպէս հայրս աշխատանքի ժամտնակ նըստում հանգստանում է, սրբելով ճակատի քըրտինքը: Երկարատէ հիւանդութիւնից յետոյ հօրս առողջութիւնը խախտւել էր, բայց նա աշխատում էր թացնել մեղանից իր թուլութիւնը: Նա իր վրա չէր ժատածում: Նա մտածում էր միայն մայրիկի, մեզ՝ իր երեխաների վրա և իր տընտեսութեան վրա, որը վերջին ժամտնակներս վնասւել էր զանազան պատահարներից և որը նա ուզում էր կարդի բերել:

Բարդ բարդելով մենք յաճախ խօսում էինք մեր տնտեսութեան մասին: Պտղիս կենզանի ժամտնակ մեր տունը հարուստ տուն էր համտր-

ւում և բոլորից յարգւած էր: Հայրս տառւմ էր սր մենք կը կարողանանք դարձեալ հարստանալ, եթէ աշխատենք և եթէ բախտը մեզ ժպտայ:

Այսպիսի ժամանակ, երբ աշխատանքը պահում էր մեզ մինչև գիշեր, հայրս սիրում էր խօսել Աստծու մասին, աշխարհի ստեղծագործութեան մասին: Նա սիրում էր նոյնպէս յիշել անցեալը, լաւ գիտէր նոերի վարքն ու սովորութիւնները և երբեմն պատմում էր այնպիսի հետաքրքիր դեպքեր, որոնք հիմա էլ չեն լինում:

—Իսկ դու գիտես, —հարցրեց մի անգամ հայրս, —ինչիցն է որ տստղերը փայլում են երկնքում:

—Ոչ, —պատասխանեցի ես, —չըդիտեմ, երբէք այդ մասին չեմ մտածել:

—Այո, այդ մասին մենք չենք մտածում, —շարունակեց հայրս, —մենք սովորել ենք նրանց երկնքում տեսնել:

—Իսկ չի կարող պատահել՝ ժամանակ գայ, որ երկնքում ոչ մի աստղ չըմնայ: Զէ՞ որ ամեն գիշեր նրանք վայր են ընկնում:

—Այն աստղերը, որ ընկնում են, ա որդի, պատասխանեց հայրս, —առանձին աստղեր են Աստւած նրանց լոյս տալու համար չի ստեղծել, ամեն մարդ մի այդպիսի աստղ ունի: Մի մարդ մեռնելիս, մի աստղ հանգչում է երկնքում: Մենք նրանց վայր ընկնող աւտղեր ենք տառւմ

Սյ, տեսնում ես, Սիպտակ եղենու վերևը կրկին մի աստղ գլորւեց:

Ես մի փոքր լուցի և ապա հարցրի.

—Հայրիկ, եղենուն ինչու Սիպտակ եղենի ենք ասում:

Հայրս այդ ժամանակ ծածկեց բարդը վերջին խրճով. գործը վերջացնելով ասաւ.

—Դու գիտես, որ նրան Թուրքի եղենի էլ են ասում. Սիպտակ նրա համար են ասում, որ բոլոր ճիւղերը և ըունը ծածկւած են սիպտակ մամուռով, և նրա համար, որ քո պապի հայրը այդ ծառից իջել է մաղերը բոլորովին ճերմակած: Մեզ մնում է միայն վեց բարդ դնել և ես կը պատմեմ մի զարմանալի պատմութիւն:

—Սըանից ութսուն տարի առաջ, —սկսեց հայրս, —քո նախապապը պսակւել է քո նախատատի հետ: Նա շատ հարուստ և գեղեցիկ մարդ է եղել, և կարող էր ուզած հարուստի աղջիկը տոնել: Բայց նա ընտրել էր իր համար հարսնացու մի աղքատ, բայց բարի և ազնիւ աղջիկը երկու օրից յետոյ Աստւածածնայ վերափոխման տօնն է: Այդ օրը նախապապդ գնացե, և լեռնական գիւղ իր հարսնացւի ձեռքը ինդրելու: Պէտք է կարծել որ այն ժամանակն էլ հունձը ընկած է եղել: Նա իր աշխատանքը շուտովէ վերջացրել, որովհետև ճամփան երկար է. լեռնական գիւղերը մօտ չեն: Նրա գալը մեծ շփոթութիւնէ

առաջ բերել: Հարսնացւի հայրը իր գոյութիւնը պահպանելիս է եզել իր արհեստով, ածխարարների ու փայտահատների կօշիկներն է կարկատել, նրանց սրբացներն ու կացիններն է սրել, վայրենի գաղամների համար ծուղակներ է պատրաստել, այն ժամանակ մեր կողմերում շատ գայլեր են եղել: Եւ այդպէս ծերունի կօշկակարը երբ տեսել է քո նախապապին, ձեւները թուլացել են:

—Միթէ: Յօվսէփ,— ասել է նա, — դու ճիշտ ուզում ես ամուսնալիմ Հեղինէի հետ: Եւ այդ չեմ կարող հասկանալ:

—Այս, —պատասխանել է իմ պապը, — կրա համար էլ եկել եմ ձեզ մօտ, չըվախենալով երկար ճամփից: Եթէ Հեղինէն ինձ ոիրում է, եթէ դուք երկուսով համուձայն էք, որ մենք ամուսնանք, ևնց այսօր այդ հարցը կըվճռենք, իսկ վաղը ես կըգնամ գատաւորի ու քահանայի մօտ և օրէնքի համաձայն, ինչպէս սովորութիւնն է պահանջում, գրել կըտամ Հեղինէի անունով իստ տունն ու ադարակը:

Աղջիկը սիրում էր քո նախապապին և համաձայնում է նրա կինը դառնալ: Յետոյ նրանք հաշում են ու մութն ընկնելիս փեսան վերադառնում է տուն:

Նու անցել է մեր տան առաջ գտնւած մարդկանունի միջով, որտեղ հիմա էլ բուսնում են արդէն մեծ ծառեր, մտել է ծմակը և սկսել է

իշնել սաբից, շատ ուրախ: Այդտեղ մութը քո լսրովին ընկել է, բայց նա ուշադրութիւն չի գտրձրել ոչ մթութեանը, ոչ էլ վայլատակումներին, որոնք ամառային երեկոները յաճախ լինում են: Բայց նա այդտեղ լսել է գայլերի ոռնոց: Դայլերը վոհմակներով թափառում էին այստեղի անտառներում: Ամուր սեղմած իր ձեռքում կաղնի բիրը՝ պապս շտապով առաջ է քայլել: Մի առ ժամանակ գայլերի ոռնոցը դադարել է և լրութեան մէջ երբեմն լսել է գիշերացին թուզունի ձայնը: Մթանը ոչինչ երեկիս չեղնել, բացի ծառերի բներից, որոնց արանքով ոչըրուելիս է եղել մի շաւիդ: Յանկարծնանորից լսեց ուսուղ, այս անգամ շատ աւելի մօտեկից, քան առաջ և սկսել է փախչել, ինչքան որ չունչ է ունեցել: Նու տրդէն ել չի լսել գիշերացին թրոչունների ձայնը: Նրա ականջներին միայն հասել է գայլերի ոռնոցը: բանից երեացել է որ նրա ետերց կըընկլուս գալիս են գայլերը: Պապս ետ է նայել և տեսել է իրանից շատ քիչ հեռու փայլուն կէտեր: Գայլերը նրա ետերց են ընկել և սա լսել է գայլերի ատամների կըռնը թողը և ինքն իրեն ասել. «Հէ, չարժանացայ իմ հարսանքին:» Այդ ժամանակ նա հենց հասած է լինում թուրքի եղենուն: Ի՞նչ անի: Յանկարծ լուսաւորում է նրան մի միտք: Մի ճարպիկ ցատկում կիրեն պցում է ծառի վրա և բռնում է

ցածր ճիւղերից մէկը։ Գիշատիչները հասնում  
են նրան ու կանգ առնում ծասի առաջ նրանք  
հասնում են ու սպասում։ Տեսնելով նրան ծա-  
ռի վրա դայլերը օդ են շնչում և մի քանիսն էլ  
կանգնում են ետին թաթերի վրա ծառի առաջ։

Իմ պապը բարձրանում է աւելի վեր ու  
նստում է մի հաստ ճիւղի վրա։ Նա արդէն վը-  
տանքը անցած է համարում։ Ներքեւ ոռնացել  
են գայլերը ու ճանկոտել եղենու կեղեր, նրանք  
շատ շատ են եղել, մի ամբողջ վոհմակ։ Շատ  
հազիւ պատահում, որ դայլերը ամառ ժամա-  
նակ յարձակւեն մարդու վրա։ Երեխ նրանք  
մի բանից նեղացած են լինում և կամ գուցէ ի-  
րենց որսը ձեռքից բաց են թողել, ձեռքից փախ-  
ցրել։ Իմ պապը երկար նստել է ծառի վրա։ Նա  
լոյս է ունեցել, որ գաղանները կը գնան, կը ցը-  
ւեն։ Բայց չէ, նրանք շրջապատում են եղենին,  
վազվաւմ են նրա շուրջ ու ոռնում։ Գիշերն  
արդէն վազուց եկած է լինում։ Երկնքում փայ-  
լիիս են լինում աստղերը, արևմուտքում երկա-  
լիս են լինում դորշ ամպերը, որոնք երբեմ  
կայծակտելիս են լինում։ Անտառը խաղաղ և հան-  
գիստ է լինում, այնտեղ ոչ մի ճիւղ շարժւելիս  
չի լինում։

Պապս հասկանում է, որ ամբողջ դիշերը այդ-  
պէս է լուսացնելու։ Նա փորձում է օդնութիւն  
կանչել, բայց գաղանները չէին վախենում նրա

ձայնից։ Մօտիկները մարդ չի լինում, բնակա-  
րանները շատ հեռու են լինում։

Այդ ժամանակ Թուրքի եղենու վերին մերկ  
ճիւղերը դեռ ծտծկւած էին թարմ ոստերով և  
կանաչ ասեղներով։ Պապս մտածել է. «Եհ, այս  
դիշեր այստեղ եմ մնալու, չա է, աւելի վեր  
բարձրանամ։» Նա վեր է բարձրացել և նստել  
այնտեղ։

Ծառի տակ դայլերը մի քիչ հանդարաւել են,  
բայց փոթորիկը սաստկացել է։ Արևմուտքից  
ժամանակ առ ժամանակ լուել է որոտի հեռա-  
ւոր շառաչիւնը։

—Է ինչ կը լինի, եթէ ես մի ճիւղ պոկեմ,  
վէր գամ ու մի լաւ վախեցնեմ դադաններին։  
Միթէ հիմա ես չեմ կարող գլուխ հանել նրանց  
հետ։ —Այդպէս է մտածել պապս, բայց դար-  
ձեալ վէր չի եկել ծառից։

Նա շատ գէպքեր գիտեր, որ գայլերը մար-  
դիկ են կերել։

Որոտի գուգուոցը պարզ լուռում էր։ Ամ-  
պերը պարուրել էին երկինքը։ Մութը կոխել էր։  
միայն ներքեւ փայլում էին գաղանների աշքե-  
րը։ Բայց երբ բորբոքւում էր կայծակը, մի ըոպէ  
լուսաւորւում էր ամբողջ անտառը։ Ամպերը ա-  
սես թէ ալեկոծւում էին ու եռ էին գալիս, ինչ-  
պէս ջուրը կաթայի մէջ։ «Հիմա ամպերը կը  
արաքեն, այգպէս է մտածել պապս և մտել է

խիտ սաղարթի մէջ։ Գլխարկը գլխից վէր է ընկնում, բայց նա լսում է թէ ինչպէս գալլերը խոկյան և եթ նրան պատառ պատու են անում։ Յանկարծ կայծակի հրեղէն նետը փայլատակում է երկնքում։ Մի բոպէի չափ ամեն ինչ լուսաւորում է, ինչպէս օր ցերեկով, և զրանից յետոյ ամպերը գուզուում են, ճաքճաքում են և անթիւ որոտումները անցնում են մի ժայրից միւսը։

Ահա ամեն ինչ լուսմ է և երկնքում և երկրի վրա, միայն հարևան ծառի կատարին պատառում է մի գիշերային թոշուն։ Բայց այդ երկար չի տեսում. կրկին բարձանում է փոթորիկը։ Աղմկում են ծառերը, շառաջում են ճիւղերը, փչում է մի սառցնող քամի։ Դսպս պինդ բռնում է ծառի ճիւղը։ Եորից փայլատակում է կայծակը և կմնաշագոյն լոյս արձակում։ Ծառերի կատարները ծուռում են և ճօճուռում, մօտիկ ծառերը կպչում են իրար և այնպէս սաստիկ որ կարծես թէ փոթորիկը ուզեցել էնրանց արմատից հանել Բայց եղենին անշարժ է մնում, բոլոր ծառերից բարձր կանգնած։ Ներքեւ վազվզում են գայլերը և ոռնում։ Յանկարծ ճիւղերի արանքում փայլում է մի ինչ որ սպիտակ քան և քարի նման ընկնում է գետին։ Փայլատակում է կայծակը և պապս տեսնում է. որ գետնին թափւում են խոշոր կարկառատերը

Նորից կոխում է անթափանց խաւարը։ Քամին կատաղօրէն վշում է և ճարճատիւնով կոտրատում է ծառերի կատարները։ Այն բոպէի ին, երբ կայծակը փայլատակում է անտառի վըրա, պապս տեսնում է ծառի վրա մի աժդանաբան, մի ահագին թոչուն, որը լայն թափահարելով բացարած թերը՝ կամաց թոչում է դէպի եղենին և ծածկւում է նրա ճիւղերի մէջ, հեսց պապի գլխի վերեկը։

Դա, տղաս, անգն է լինում, որի բունք եղել է եղենին վրա.»

Քանի որ հայրս պատմում էր, ոչ մի խըրձի ձեռք չըտաւաւ։ Ես չեմ յիշում, որ այդ հանգիստ, իրեն զսպող մարդը երբ և իցէ խօսէր այդքան յափշտակւած։

— Եետոյ ինչ է լինում, — շարունակեց հայրս Այս, քամին կատակ չի անում։ Որոտի հորւածները մէկ մէկի ետեից իրար էին հետեւում և կայծակը փայլելիս՝ երեսում էր թէ ինչպէս կարկուտը թափւում էր։ Նա կպչում էր ծառերի բներին և գետին զարնւելով վեր վեր էր թըռչկուտում։ Ամեն անգամ, երբ կարկառատերը կպչում էին եղենին բնին, ծառը խուլ տընքում էր։ Սարերի գագաթներին կայծակուս էր նոյնպէս և հեռաւոր անտառի վրա։ Յանկարծ պայծառ լոյսը կուրացնում է պապին, մի ինչ որ տաքութիւն է փչում, լուսում է մի խը-

լացնող ճայթիւն,—մի քիչ հեռու կայծակը խը-  
փում է ծառին:

Բայց թուրքի եղենին մնում է անվաս և  
պապս թագնուում է նրա ծիւղերի արանքում:

Բոցավառ ծառը շուրջը լուսաւորում է:

Այդտեղ տեսնում է՝ անտառի վրա կար-  
ծես կախւած է մի թեթև կարմրագոյն շղարշ:  
Տեսնում է որ կարկտի ցանցը նօսրանում է և  
ծառերի շատերի կատարները ջարդւած են:

Վերջապէս կատարի մրրիկը քիչ քիչ դառնում  
է մի հանգիստ քամի և կարկուալը՝ յորդ անձրեւ  
Որոտի տրաբոցները քշանում են ամպերը ձըգ-  
ւում են դէպի հիւսիս և արևմուտք, բայց կայ-  
ծակները գարձեալ փայլատակում էին անընդհատ:

Ներքեց, եղենու տակ գայլերի ոռնոցը դա-  
դարում է, էլ չեն երեսում նրանց վառող աչ-  
քերը, վաս եղանակը վնազում է գիշակերներին:

Ճիւղից ճիւղ անցնելով պապս իջնում է  
գետին: Նա դուրս է գալիս անտառից և գնում  
է դէպի տուն:

Արդէն կէս գիշեր է լինում:

Նորափեսան հասնում է տուն և տեսնելով, որ  
լուսամուտներից լոյս չի երեսում, զարմանում է  
թէ ինչպէս կարելի է այսպիսի գիշերը քնել,  
բայց ոչ ոք քնած չի լինում: Բոլորը նստած են  
ինում վառած մոմի շուրջը: Նրանք ծածկածեն  
ինում լուսամուտի փեղկերը, որովհետեւ կար-

կուտը ջարդել էր բոլոր ապակիները:

— Դու անտառապահի մօտ էիր, Սեպ, կար-  
կուտի ժամանակ,— հարցնում է պապին մայրը:

— Ոչ, մայրիկ, անտառապահի մօտ չէի, — պա-  
տասխանում է պապ:

Միւս օրը անտառից բուրում էր թարմ  
խէժի հոտը, նա հոսում էր մայրի ծառերի կե-  
ղեներից, ինչպէս վէրըից՝ արինք: Կարկուալը  
դեռ չէր հալւել: Նրա վրայով գնալը դժւար  
էր: Օղը ցրտել էր: Աստւածածնի ուխտա-  
ւորները, անտառի միջով գէպի եկեղեցին անց-  
նելիս, այստեղ այնտեղ ցախերի կոյտերի տակ  
տեսնում էին սպանւած թռչուններ և ուրիշ  
մանր գագաններ, Մեծ ծառի կոտրւած կատարի  
տակ պառկած էր մի սատկած գայլը:

Պապս այդ օրը ժամ է գնում շատ մտած-  
կուա, Յանկարծ Լիան, անտառապահի աղջիկը,  
բացականչում է զարմացած:

— Էս ի՞նչ հրաշք, Սեպ. մազերդ սիպտակ են:

Յետոյ նա բոլորը պատմեց և այն օրից ծա-  
ռը, որի վրա նա գիշերն անց էր կացքել, կոչւեց  
«Միպտակ եղենի»:

Այ թէ ինչ պատմեց հայրս խուրձերը  
կրելիս, և ես էլ յետոյ զըի առայ այս պամւած-  
քը, բայց լիշողութեամբ:

Տօւն վերադառնալով, որտեղ մեզ սպասում  
էր ընթրիքն և հանգստութիւնը, և մի քանի անգամ

ճանապարհին աչքս պցեցի ետ, ծեր եղևնու վրա:

Մեն-մենակ ցցւած էր անտառից վերև, դէ-  
պի /երեկոյեան մութ երկինք:

Էն օրից յետոյ ես արդէն չէի վախենում,  
եթի անցնում էի այդ ծառի մօտով. Երկար տա-  
քիներ կանգնած էր նա և ամառ և ձմեռ միենոյն  
ձևով, նոյն ոստոտ, իրար խառնւած ճիւղերը,  
նոյն աղքատիկ կանանչ զարդարանքը, նոյն  
վերին ճիւղերի փշերը և մերի, սևացած բունը,  
այս էլ առանց կատարի:

Անցան շատ տարիներ։ Մի անգամ աշնանը  
հայրս զարթեցրեց ինձ դիշերով և ասաւ. «Եթէ  
ուզում ես տեսնես թէ ինչպէս է վառում Սիպ-  
տակ եղանին, շուտով մեր կաց։»

Երբ ես տանից գուրս եկայ, տեսայ ան-  
տառի վրա մի պայծառ բոց։ Ծուխի խիտ քու-  
լաները բարձրանում էին դեպի աստղագարդ եր-  
կինքը։ Լաւում էր թէ ինչպէս Փշուս էր բոցը,  
ինչպէս ճոճուում էին ճիւղերը։ Քիչ յետոյ մենք  
նորից պառկեցինք քնելու։ Առաւտեան անտա-  
ռից վեր ցցւած էր միմիայն վառւած բունը։  
Տեղը մասցած ճիւղերը յիշեցնում էին բաց ա-  
րած ձեռքեր։ Բարձր երկնքում պտոյտ էր զա-  
լիս գիշատիչ թռչունը։

Պշոք չը կարողացաւ հասկանալ թէ ինչ կերպ  
էր վառւել ծառը այդպիսի մի պայծառ օր. այդ  
այդպէս էլ անյայտ մնաց. Մեր կողմնաբուժ շատ

էին խօսում այդ դէպքի մասին և կարծում էին  
թէ այդտեղ մի ինչ որ բան կար: Սև բունը գեռ  
մի բանի տարի ցցւած մնում էր, բայց յետոյ  
նա էլ ջարդւեց և անտառի վրա էլ ոչինչ  
չէր բարձրանում: Կոճղի և արմատների վրա,  
որոնք կամաց կամաց զնում են գետնի խորքը,  
այժմ բուժնում է կանաչ մամուռը:





4981

9h22 b 20 4.